«Զարթոնքի միջնակարգ դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության
տնօրեն՝ Ն. Մելքոնյան
2022- 2023 ուստարի

# ՀՀ Արմավիրի մարզի «Զարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տեղակալի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքների տարեկան

# ՊԼԱՆ ԾՐԱԳԻՐ

# ՆԱԽԱԲԱՆ

Կրթական համակարգի վրա անմիջական ազդեցություն են ունենում համաշխարհային արդի զարգացումներն առաջարկելով տարատեսակ խնդիրներ:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային նտնեսությունները անընդհատ վերակառուցվում են:

Անընդհատ փոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի կազմավորվում և վերափոխվում են աշխատատեղերը:

Որակյալ մասնագետների պահանջները առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջարկներին արագորեն համալրելու, տեղաշարժվելու կարողությունը:

Կրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել աժեվորմանը զարգացնելով համակեցության և արժեքային որակներ:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է ժողովրդավարության և ազատական տնտեսության վրա հենվող քաղաքացիական հասարակություն:

Կյանքի բոլոր ոլորտներում կատարվել են համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակույթային և սոցիալական գործոններով:

Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Կրթության բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման մեթոդների անընդհատ վերանայում, վերափոխում հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Կրթության մասին օրենքը նպաստեց կրթության անհատի հասարակության և պետության շահերից բխող ուսումը և դաստիարակությունը միասնական գործընթաց դարձնելու հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգություն, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն:

Հայաստանի հանրապետությունում կրթությունը երկրի զարգացման և հզորացման ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոնն ու երաշխիքն է։

Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը։

Կրթական բարեփոխումները մեր երկրում կշարունակվեն դեռևս այնքան ժամանակ մինչև մենք կունենանք մեր հասարակության պահանջներին ու միջազգային չափանիշներին համահունչ կրթական համակարգ։

Ելնելով հրամայական դարձած պահանջներից «Զարթոնքի միջնակարգ դպրոց»-ի մանկավարժական կոլեկտիվը գիտակցելով բարեփոխումների անհրաժեշտությունը, մշտապես կկատարելագործի մասնագիտական կարողությունները պարբերաբար կմասնակցի վերապատրաստման դասընթացներին, կզբաղվի ինքնակրթությամբ, որպեսզի կարողանա իրագործել իր առջև դրված խնդիրները։

Սեպտեմբերի մեկի դրությամբ դպրոցում սովորում են 246 աշակերտ։ Համակազմվել է 12 դասարան։

Ներառված աշակերտները չորսն են (4)։

2021-2022 ուստարում ունեցել ենք 11 շրջանավարտ, բարձրագույն ընդունված շրջանավարտներ չունենք։

Կրթության գործընթացը իրականացնում են 23 մանկավարժներ որոնցից 21-ը բարձրագույն կրթություն ունեն, 2-ը՝ միջին մասնագիտական և երկու ուսուցչի օգնական։

2020-2021 ուստարում դպրոցի առաջադիմությունը կազմել է 100% ունեցել ենք 18 գերազանցիկ որոնք պարգևատրվել են գովասանագրերով

Մասնակցել ենք «Կենգուրու» մաթեմատիկական և «Մեղու» Հայոց լեզվի մրցույթին ունեցել ենք հատուկ և լավագույն մրցանակների արժանացած աշակերտներ։

Դպրոցում ընթանում է հերթական ատեստավորումը:

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը հանրակրթության հետևողական և նպատակասլաց իրականացման արդյունքում ակնկալում է, որ հանրակրթական դպրոցի շրջանավարտը պետք է՝

1. Ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, լիարժեք տիրապետի ՀՀ պետական լեզվին:
2. Ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը, մտահոգվի ազգային ու պետական խնդիրների լուծմամբ:
3. Ունենա պետական չափորոշիչներով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերված գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն:
4. Ունենա ինքնուրույն մտածելակերպ, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն:
5. Իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, լինիօրինապահ, ազնիվ մարդասեր, պատասխանատու, նախաձեռնող և հասարակական գործում դիրքորոշում ունեցող քաղաքացի:
6. Ճանաչի համաշխարհային քաղաքակրթության նվաճումները, ճանաչի համամարդկային արժեքները:
7. Կարողանա հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով:
8. Իմանալ առողջ ապրելակերպի, անվտանգ կենսագործունեության կանոնները և դրանք կիրառել կյանքում:
9. Կարողանա իր նախասիրություններին և հետաքրքրություններին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրելու 2022-2023 ուսումնական տարում առավել հաջողությունների հասնելու համար:

Հաստատում եմ՝ ____________

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԶԱՐԹՈՆՔԻ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

# ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

## 2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը /ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՍ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | Դպրոցի 2001-2022 ուստարվա ներքին ստուգման հաշվետվության կազմում | Նախորդ ուստարվա գործունեության հաշվետվություն: | Հուլիս-օգոստոս |
| 2 | Մասնակցություն դպրոցի 2021-2022 ուստարվա կատարված աշխատանքների ամփոփմանը և նոր ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի նախապատրաստմանն ու կազմմանը: | Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում: | Օգոստոս |
| 3 | Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի կազմում: | Ուսումնական գործընթացի կազմակերպում: | Օգոստոս |
| 4 | 2021-2022 ուստարում տարեկանից կամ ավարտական քննություններից մեկ կամ երկու առարկաներից անբավարար գնահատված ու ամառային առաջադրանքներ ստացած աշակերտներից աշնանային վերաքննությունների կազմակերպում, ընդունում և փոխադրման-ավարտման ձևակերպում: | Աշակերտների հետ անհատական ուսուցման աշխատանքներ իրականացնող մանկավարժների գործունեության վերլուծություն: | 25-30 օգոստոս |
| 5 | Դասարանների կոմպլեկտավորում: | ՀՀ «Կրթության մասին» օրենքի և դպրոցի ընդունելության կարգի պահպանում: | Մինչև օգոստոսի 31 |
| 6 | Ուսումնական աշխատանքների նախապատրաստման և իրականացման համար անհրաժեշտ ձևաթղթերի նախապատրաստում: | Ուսումնական գործընթացի կազմակերպում: | օգոստոս |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը<br>/ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՍ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 7. | Դպրոցի սովորողների ընդունելության գործընթացի կազմակերպում, խորհրդատվական հանձնախմբի ձևավորում և աշխատանքների համակարգում : | ՀՀ << Կրթության մասին>> օրենքի պահպանում: | օգոստոս |
| 8. | Դպրոցի դասարանների կոմպլեկտավորում : | ՀՀ<< Կրթության մասին>> օրենքի կարգի պահպանում | մինչև սեպտեմբերի 1-11 |
| 9. | Ծանոթացում ուսումնական ծրագրերի,չափորոշչային պահանջների, դասագրքերի վերջին փոփոխություններին, մեթոդական նամակներին, կից գրություններին և ուղեցույցներին , դրանց քննարկումներ առարկայական մասնախմբերի նիստերում: | Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերահսկում: | օգոստոս-սեպտեմբեր |
| 10. | 2022 -2023 ուստարվա առարկայական մասնախմբերի ձևավորում, նախագահների առաջադրում,մասնախմբերից մ/խ անդամների առաջադրում: | Մեթոդմիավորման կանոնադրության պահպանում | օգոստոս |
| 11. | Նոր ուսումնական տարվա ուսպլանի ծանոթացում: | Ուսպլանի պահանջների կատարում: | օգոստոս |
| 12. | Դպրոցի 2022 -2023 ուստարվա ՈՒՍՊԼԱՆ-ի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի վերաբերյալ առարկայական մասնախմբերում կատարված քննարկումներ և դրանց հիման վրա այդ ժամաքանակի տնօրինման վերաբերյալ մ/խ նիստում առաջարկությունների առաջադրում: | Ուսպլանի պահանջների կատարում | օգոստոսի 20-30 |
| 13. | Դպրոցի 2022-2023 ուստարվա և մասնավորապես 1-ին կիսամյակի ուսումնական պլանի կազմում ու ներկայացում մ/խ նիստի քննարկմանն ու հաստատմանը: | ՀՀ<< Կրթության մասին>> օրենքի և ուսպլանի պահանջների կատարում | օգոստոսի 25-30 |
| 14. | 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի վերջնական դասաբաշխման իրականացում մասնախմբերի նիստերում | Դասաբաշխման համապատասխանեցում ուսուցիչների մանկավարժական վարպետության ու փորձին,միջին ծանրաբեռնվ. | օգոստոսի 25-30 |

| h/h | Վերահսկողության ենթակա հարցերը /ԴԱՍԱՑՈՒՑԱԿ ԵՎ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 15. | Ուսուցիչների ծանոթացնել դասացուցակի և ժամերի բաշխմանը: | Ուսումնական գործընթացի համակարգում | սեպտեմբեր |
| 16. | 2022 -2023 ուստարվա տարիֆիկացիայի կազմում: | Դպրոցի ուսպլանի պահանջների կատարում | օգոստոս-սեպտ. |
| 17. | Դասացուցակի կազմում 1-ինկիսամյակի համար, դասացուցակի ընթացիկ սպասարկում: | Դասերի անցկացման համապատասխանե-ցում սանիտարական նորմերին | օգոստոսի 25-30 |
| 18. | ՈՒսուցիչների աշխատաժամանակի նորմավորում,ելնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից, ըստ կողմ-նորոշիչ աղյուսակի ու դասացուսակի ընձեռած հնարավորության | ՀՀ կառավարության որոշում | սեպտեմբեր |
| 19. | Բացակա ուսուցիչների հաշվառում, բաց թողնված և փոխարինած դասաժամերի արձանագրում և ժամավճարային հաշվարկների ներկայացում: | Դպրոցի կանոնադրություն. կետ | ուստարվա ընթացքում |
| 20. | Առարկայական մասնախմբերի աշխատանքային պլանների կազմ-ում և հետագա աշխատանքների համակարգում ,ամենամսյա նիս-տերի գումարում: | Մեթոդմիավորման կանոնադրության պահպանում | մինչև սեպտեմբերի 15 |

| | | | |
|---|---|---|---|
| 21. | Առարկայական ծրագրերին, չափորոշչային պահանջներին ,հատ-կացված շաբաթական ժամաքանակին համապատասխան թեմա-տիկ պլանների կազմում և հաստատում: | Առարկաների թեմատիկ պլանների որակական չափանիշների սահմանում | մինչև սեպտեմբերի 15 |
| 22. | Ծանոթացում նոր ուստարվա գնահատման համակարգի վերա-բերյալ մեթոդական ցուցումներին, ներքին ու արտաքին գնահատ-ման համակարգի գործընթացին: | Գնահատման չափանիշների, ձևերի և մեթոդների ապահովում | սեպտեմբեր |
| 23. | Միավորային գնահատման բաղադրիչների՝ բանավոր հարցման, գործնական և գրավոր աշխատանքների քանակի ճշտում ըստ առարկաների ,դասարանների և հատկացված շաբաթական ժամաքանակի: | Գնահատման չափանիշների, ձևերի և մեթոդների ապահովում | սեպտեմբեր |
| h/h | **Վերահսկողության ենթակա հարցերը**<br>/ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ/ | **Վերահսկողության նպատակը** | **Կատարման ժամկետը** |
| 24. | Սեմինար-քննարկումներ մեթոդմիավորման նիստերում չափորո-շիչ, օրացույցային և թեմատիկ պլաններ, օրվա պլան, գնահատում, ներառական կրթություն ,մեթոդ և հնարք,ուսուցչի վարվելակերպ և այլ մանկավաժական ու հոգեբանական թեմաներից: | Առաջավոր փորձի փոխանակում, հաղոր-դակցում գիտամեթոդական նորույթներին | ուստարվա ընթացքում |
| 25. | Թեմատիկ առարկայական ուսումնական պլանների, առարկայական չափորոշչային պահանջների, գնահատման նորմատիվների կատարողականի ընթացիկ վերահսկողություն: Արտակարգ դրության պայմաններից ելնելով դասարանները բաժանել խմբերի և ծրագրային նյութը գրել խմբերի համար: | Ուսումնական գործընթացի համակարգում | ուստարվա ընթացքում |
| 26. | Առանձին ուսուցիչների աշխատանքային գործունեության ուսում-նասիրություններ, դրանց և ուսուցիչների ներկայացրած հաշվե-տվությունների քննարկում մեթոդմիավորման և մանկավարժական խորհրդի նիստերում: | Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 27. | Մասնակցություն «Դպրոց-կենտրոններ» իրավաբանական միության կողմից կազմակերպված գործընթացներին ու դրանց մասսայականացում | Առաջավոր փորձի փոխանակում, հաղոր-դակցում գիտամեթոդական նորույթներին | ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| 28. | Մ/Խ-ին ներկայացվող տեղեկագրերի ամփոփագրերի, տեղեկատվության և հաշվետվության կազմում: | Դպրոցի կանոնադրություն. կետ -ի պահանջներ | ուստարվա ընթացքում |
| 29. | Մ/Խ-ի որոշումների իրականացման ուղղությամբ կատարվող աշխատանքների համակարգում: | Դպրոցի կանոնադրություն. կետ -ի պահանջներ | ուստարվա ընթացքում |
| 30. | Մ/Մ նախագահների հետ համատեղ կազմակերպել միջոցառումներ սովորողների գիտելիքների որակը բարելավելու, դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների կարողությունները ու հմտությունները զարգացնելու ուղղությամբ: | Դպրոցի կանոնադրություն. կետ -ի պահանջներ | ուստարվա ընթացքում |
| 31. | Մանկավարժական գործունեության վերահսկողություն՝ աշակերտների իրավունքների պահպանման ուղղությամբ: | Գրավոր,գործնական, տնային և դասարանական աշխատանքների չափանիշների պահպանում | ուստարվա ընթացքում |
| **h/h** | **Վերահսկողության ենթակա հարցերը** /ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹ. ԵՎ ԱՌԱՐԿ. ՇԱԲԱԹՆԵՐ/ | **Վերահսկողության նպատակը** | **Կատարման ժամկետը** |
| 32. | Մ/Մ նախագահների հետ համատեղ ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման,դիտակտիկ նյութերի կիրառման, կաբինետների ու դասի կահավորման,թեմատիկ, փոխներգործուն , համագործակցային,բաց և օրինակելի դասերի ու դաս-միջոցառումների անցկացման ընթացքը: | Առաջավոր փորձի փոխանակում, հաղորդակցում գիտամեթոդական նորույթներին | Ուստարվա ընթացքում |
| 33. | Ուշադրություն դարձնել ԱՈՒՊ-ների կազման գործընթացին և ամսական մեկ անգամ անցկացնել հանդիպումներ ԱՈՒՊ կազմող ուսուցիչների հետ: | Առաջավոր փորձի փոխանակում, հաղորդակցում գիտամեթոդական նորույթներին | ուստարվա ընթացքում |
| 34. | Ըստ ուսպլանի և ուսումնական առարկաների ծրագրային, ուսուցանվող նյութի բովանդակային ու դասավանդման մեթոդական պահանջների,յուրաքանչյուր դասարանում ,տարբեր առարկաներից համակարգչային դասարաններում անց կացվող դասերի վարում: | Ուսպլանի հավելվածների պահանջներ | ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| 35. | Մ/Մ-ներում առանձին առարկաների դասավանդման ուսումնասի-րություններ.<br><br>ա.հայոց, և ռուսաց լեզուների ուսուցման դրվածքը<br>բ. մաթեմատիկայի ( II-IX դաս.) և ինֆորմատիկայի ( VI-IX դաս.) դասավանդումը<br>գ.պատմության և աշխարհագրության դասավանդումը V-IX դաս.<br>դ. ֆիզիկայի,կենսաբանության և քիմիայի դասավանդումը VII-IX դաս.<br>ե. ֆիզկուլտուրայի, տեխնոլոգիայի և ՆԶՊ-ի ուսուցման դրվածքը: | Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 36. | Առարկայական օրերի և շաբաթների կազմակերպում.<br><br>ա.հայոց լեզու և գրականություն<br>բ. մաթեմատիկա<br>գ. օտար լեզուներ<br>դ. պատմություն,հասարակագիտություն և ՀԵՊ<br>ե. բնագիտական առարկաներ | Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում, ա-ռարկայի նկատմամբ սովորողների հետա-քրքրության զարգացում, նրանց ստեղծա-գործական մտածողության զարգացում | փետրվար |
| 37. | Մանկավարժների գործունեության ստուգում՝ թեմատիկ աշխատանքներին համապատասխան | Թեմատիկ և կիսամյակային աշխատանք-ների գնահատման օբյեկտիվություն | ուստարվա ընթացքում |
| **հ/հ** | **Վերահսկողության ենթակա հարցերը**<br>/ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ/ | **Վերահսկողության նպատակը** | **Կատարման ժամկետը** |
| 38. | Գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից.<br>ա. հայոց լեզու և գրականություն<br>բ. մաթեմատիկա<br>գ. օտար լեզուներ<br>դ. բնագիտական առարկաներ | Սովորողների ընթացիկ և մնացորդային գիտելիքներին,կարողություններին և հմտություններին ծանոթացում,դրանց համապատասխանությունը չափորոշչային պահանջներին | ուստարվա ընթացքում |
| 39. | Մանկավարժների գործունեության վերահսկողություն՝ փոխադարձ դասալսումների կազմակերպում,դրանց քանակի ու գրանցումների իրականացում: | Առաջավոր փորձի փոխանակում | ուստարվա ընթացքում |
| 40. | Աշակերտների հետ անհատական ուսուցման աշխատանքների կազմակերպում: | Մանկավարժների գործունեության վերլուծություն | ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| 41. | Դասալսումներ՝ տարաբնույթ և տարանպատակ.<br>ա. նորակազմ դասարաններում՝ հայտորոշիչ բնույթի<br>բ. ատեստավորման ենթակա ուսուցիչների մոտ՝ բնութագրի կազմում<br>գ. երիտասարդ ուսուցիչների մոտ՝ մեթոդական աջակցություն<br>դ. ավարտական դասարաններում՝ քննություններին պատ-րաստվածության գնահատում: | Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում | ուստարվա ընթացքում |
| 42. | Պարբերաբար ստուգել դասին ուսուցիչների պատրաստվածությու-նը,խթանել օրվա դասի պլանի գործածումը,բարձրացնել դրանց կիրառական արդյունավետությունը: | Ուսուցչի գործունեության ուսումնասիրում | ուստարվա ընթացքում |
| 43. | Վերահսկել ուսուցիչների աշխատանքային գործունեության ոլորտ-ները. ծրագրային նյութի կատարողական,գնահատման,բաց դասե-րի և փոխադարձ դասալսումների գործընթացը, սովորողների գիտելիքների,կարողությունների և հմտությունների համապատաս-խանությունը կրթական չափորոշչային պահանջներին: | Մանկավարժների գործունեության վերլուծություն | ուստարվա ընթացքում |
| 44. | Մանկավարժների գործունեության ստուգում պետական ավարտա-կան քննությունների նախապատրաստման ուղղությամբ: | Ոիսումնական նյութերի ապահովվում,ա-ռաջադիմ. և հաճախումների վերահսկում | ուստարվա ընթացքում |
| հ/հ | **Վերահսկողության ենթակա հարցերը**<br>/ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ/ | **Վերահսկողության նպատակը** | **Կատարման ժամկետը** |
| 45. | Աշակերտների՝քննությունների պատրաստվածության մակարդակի ստուգում: | Հուզող հարցերի պարզաբանում և վերհա-նում, լուծումների առաջադրում | ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| 46. | Հրավիրել մանկավարժական խորհրդատվություններ,սեմինարներ, բանավեճեր, քննարկումներ, հաղորդումներ ուսուցման, գնահատման,կիսամյակային և տարեկան ամփոփումների, փոխադրման և ավարտման կարգի, քննությունների և վերաքննությունների կարգի, էլեկտրոնային մատյանների վարման կարգի, matyan.emis.am - կայքի գործունեության, մանկավարժական մեթոդիկայի նորությունների, տարիքային հոգեբանության, արժեքային համակարգի ձևավորման,սովորողների և աշխատողների ներքին կարգապահական և այլ հարցերի վերաբերյալ: | Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացում Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում | ուստարվա ընթացքում |
| 47. | Մասնակցել ծնողական ժողովներին, ծնողական խորհրդի և աշխորհրդի նիստերին ու միջոցառումներին, դրանցում հանդես գալ ուսումնադաստիարակչական բնույթի հարցերի պարզաբանմամբ: | Ծնողներին ու աշակերտներին հուզող հարցերի պարզաբանում և վերհանում , համապատասխան լուծումների առաջադրում | ուստարվա ընթացքում |
| 48. | Առարկայական օլիմպիադաների դպրոցական կազմկոմիտեի կազմում և նիստերի գումարում,խրախուսումների առաջադրում: | Օժտված աշակերտների բացահայտում, նրանց հետ տարվող աշխատանքներ | նոյեմբեր |
| 49. | Դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատրաստում և իրականացում,դրանց արդյունքների ամփոփում և քննարկումներ մանկխորհում, մասնախմբերում,աշկոմում և ծնողխորհրդում:<br>ա. դպրոցական փուլ<br>բ. տարածաշրջանային փուլ<br>գ. մարզային փուլ<br>դ. հանրապետական փուլ | Մրցույթներին և միջոցառումներին ուսուցիչների և աշակերտների հաջող մասնակցության ապահովում | դեկտեմբեր<br>հունվար-փետրվար<br>փետրվար-մարտ<br>մարտ-մայիս |
| h/h | **Վերահսկողության ենթակա հարցերը**<br>/ՄԱՏԵՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ/ | **Վերահսկողության նպատակը** | **Կատարման ժամկետը** |
| 50. | Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ԿԳՄՍՆ-ի հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին:<br>Ուսուցիչներին նախապատրաստել էլեկտրոնային մատյաններում աշխատելու համար և ծանուցել էլ.մատյաններում գրանցումները կատարել 3-օրյա ժամկետում: | Մատենավարության կարգի պահպանում | սեպտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 51. | Անհատական դասամատյանների նախապատրաստում ևգործածում: | Ուսումնական գործընթացի կազմակերպում | օգոստոս-սեպտեմբեր |
| 52. | Աշխատանք աշակերտների անձնական տվյալների ուղղությամբ: | Անձնական գործերի կազմում դասղեկների կողմից,որակի գնահատում | օգոստոս-սեպտեմբեր |
| 53. | Էլեկտրոնային մատյանների գործածության ամենամսյա ստուգումներ, անհրաժեշտ դիտողությունների և առաջարկություն-ների գրանցում: | Մատենավարության միասնական կարգի վերահսկողություն | յուրաքանչյուր ամսվա սկիզբ |
| 54. | Աշխատանքներ սահմանված ժամաքանակից ավել բացակայած աշակերտների հետ.<br>ա. 50 և ավել դասաժամ բացակայություն<br>բ. 80 և ավել դասաժամ բացակայություն<br>գ. 100 և ավել դասաժամ բացակայություն<br>դ. 120 և ավել դասաժամ բացակայություն | Փոխադրման և ավարտման կարգի պահպանում | նոյեմբեր դեկտեմբեր մարտ ապրիլ-մայիս |
| **h/h** | **Վերահսկողության ենթակա հարցերը**<br>/ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԿԱՐԳՈՒՄ/ | **Վերահսկողության նպատակը** | **Կատարման ժամկետը** |
| 55. | Վերապատրաստման կարիք ունեցող մանկավարժների ցանկի հստակեցում և նրանց իրազեկում ըստ սահմանված կարգի: | Ուսուցիչների որակավորման բարձրացում | հոկտեմբեր |
| 56. | Վերապատրաստման դասընթացներին , սեմինարներին, մրցույթ-ներին ուսուցիչների մասնակցության ապահովում: | Ուսուցիչների որակավորման բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 57. | Վերապատրաստված ուսուցիչների պարզ ընթացակարգով տարա-կարգման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաս-տում և կազմում: | Ուսուցիչների որակավորման բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 58. | Սկսնակ և սակավափորձ ուսուցիչների գործունեության վերահսկողություն: | Ուսուցիչների որակավորման բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 59. | Ինքնակրթության ուղղությամբ՝ մանկավարժների գործունեության համակարգում | Ուսուցիչների որակավորման բարձրացում | ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| 60. | Մանկավարժների կողմից կաբինետների, դասասենյակների, նախասրահների ձևավորում, դիտակտիկ և ուսուցման համար անհրաժեշտ այլ պարագաների հավաքագրում: | Ուսումնանյութական բազայի հարստացում | ուստարվա ընթացքում |
| 61. | Ուսուցիչների մեթոդական աշխատանքների կազմակերպում | Մանկավարժների մեթոդական գործունեության վերլուծություն | ուստարվա ընթացքում |
| 62. | Մանկավարժների հոգեբանամանկավարժական իրազեկվածության բարձրացում: | Ուսուցիչների որակավորման բարձրացում | ուստարվա ընթացքում |
| 63. | Դպրոցական գրադարանի աշխատանք | Մեթոդական և թեմատիկ ցուցադրումների կազմակերպում | ուստարվա ընթացքում |
| 64. | Աշխատանք դասագրքերի հետ. ապահովվածություն, գործածում, պահանջագրերի և կարծիքների կազմում,փորձարկումներ և քննարկումներ | Ուսումնանյութական բազայի հարստացում | ուստարվա ընթացքում |
| **հ/հ** | **Վերահսկողության ենթակա հարցերը**<br>/ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ/ | **Վերահսկողության նպատակը** | **Կատարման ժամկետը** |
| 65. | Առանձնահատուկ ուշադրություն դարձնել «Առողջ ապրելակերպ» առարկայի դասավանդմանը 8-11-րդ դասարաններում: | Ուսպլանի հավելվածի պահանջների ապահովում | սեպտեմբեր-հոկտեմբեր |
| 66. | 9-րդ դասարանում սովորողների ավարտական, քննությունների մասնակիցների նախնական հայտագրում: | Քննական կարգի պահանջների ապահովում | դեկտեմբեր |
| 67. | 2022 -2023 ուստարվա , ըստ քննական առարկաներից , աշակերտների պետական ավարտական քննությունների ցուցակների կազմում և դրանց առաքում էլեկտրոնային փոստով: : | Քննական կարգի պահանջների ապահովում | փետրվար-մարտ |
| 68. | Պետական ավարտական քննությունների ցուցակների ճշգրտում, փոփոխություններ կամ հաստատում: | Քննական կարգի պահանջների ապահովում | ապրիլ |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը<br>/ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՇՐՋԱՆ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 69. | 2022-2023 ուստարվա փոխադրման, ավարտման և քննական կարգի մասսայականացում ուսուցիչների, աշակերտների և ծնողների շրջանում: | Ուսուցիչների, աշակերտների և ծնողների իրազեկում | 1-10 մայիսի |
| 70. | 2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության ամփոփում, IV դաս. գիտելիքների ստուգման և IX դաս. ավարտական քննություններին թույլատրում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | 25-26 մայիս |
| 71. | Սահմանված ժամաքանակից ավել դասաժամ բացակայած աշակերտների հաշվառում,ցանկի ներկայացում մանկխորհին, փաստաթղթերի կազմում,քննությունների և ստուգարքների կազմակերպում և անց կացում ,ծնողների իրազեկում, աշխատանք դասամատյաններով : | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | 05-28 մայիս |
| 72. | Քննությունների և նախաքննական խորհրդատվությունների աշխատակարգի և ժամանակացույցի կազմում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | մինչև մայիսի 25 |
| 73. | 9-րդ դասարաններում ֆիզկուլտուրայի քննությունների նախապատրաստում ,կազմակերպում,իրականացում և ամփոփում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | մինչև մայիսի 31 |
| 74. | Քննող և ստուգող հանձնաժողովների, կազմակերպիչների ու հերթապահների նախնական ցանկի կազմում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | մինչև մայիսի 25 |
| 75. | Քննական կենտրոնի և քննասենյակների կահավորում | Քննական կարգերի պահանջների ապահովում | մինչև մայիսի 31 |
| 76. | 9- րդ դասարաններում պետական ավարտական քննությունների կազմակերպում և անց կացում, դրանց արդյունքների ամփոփում և փոխանցում դասամատյաններ: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | հունիսի 1-25 |
| 77. | Տարեկանից 1 կամ 2 առարկաներից անբավարար գնահատված աշակերտների ամառային առաջադրանքների հանձնարարում: | Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում | Հունիսի 1-10 |

| հ/հ | Վերահսկողության ենթակա հարցերը<br>/ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ/ | Վերահսկողության նպատակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 78. | Աշակերտների անձնական գործերի լրացման ու վարման գործունեության ստուգում: | Դասղեկների աշխատանքների կազմակերպում | հունիս |
| 79. | Ավարտական փաստաթղթերի լրացման համար անհրաժեշտ ձևաթղթերի նախապատրաստում և դրանց լրացում: | Դասղեկների կազմած տեղեկատվության ճշգրտում | հունիս- հուլիս |
| 80. | Ավարտական փաստաթղթերի լրացում, ստուգում և բաշխում: | Սահմանված կարգի և ժամկետի պահպանում | հունիսի 25-30 |
| 81. | Ուսուցիչների և Մ/Մ նախագահների տարեկան հաշվետվությունների քննարկում: | Կատարողական վերլուծություն | հունիս |
| 82. | Առանձին առարկաների տարեկան առաջադիմության մասին ամփոփագրերի կազմում: | Կատարողական վերլուծություն | հունիս-հուլիս |
| 83. | 2022-2023 ուստարվա հենքային ուսպլանի ծանոթացում, նախնական կոմպլեկտավորում և դասաբաշխում ըստ գալիք տարվա դպրոցի ուսպլանի նախագծի: | Գալիք ուստարվա նախապատրաստում | հուլիս |
| 84. | Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2022-2023 ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետվության կազմում: | Կատարողական վերլուծություն | հուլիս |